ՈՒՐԲԱԹ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1881—№ 253

№ 253 - ՈՒՐԲԱԹ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1881

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի և տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակի և տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

Մեղու
ՀԱՅԱՍՏԱՆԻ

Խմբագրութեանս ուղղած թէ՛ յօդուածները և թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ և հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել և կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները և պահում է երկու ամիս մինչև ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին $1^{1}/_{2}$ կոպէկ։
Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը և պ. Շահվերդեանի պաւիլիօնում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ՔՍԱՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ

1882 Թ.

Կը հրատարակվի նոյն ծրագրով և ուղղութեամբ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։ Առաջնորդող յօդուածներ, Ազգային, Քաղաքական, Հեռագիրներ, Բանասիրական, Ֆէլիէտօն, Մանր լուրեր, Խառն լուրեր, Պատասխանիք խմբագրութեան, և Յայտարարութիւններ։

Տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի։ Ստորագրվել կարելի է խմբագրատանը, Հեռագրական կայարանի մօտ Ս. Վարդանեանի տանը։ Փօստայի և տան հասցնելու ԾԱԽՔԸ խմբագրութեան վերայ է։

Ծանօթ.՝ Ներկայ թուականին «ՄԵՂՈՒՆ» հրատարակվեցաւ շաբաթը վեց անգամ, օգնութեամբ «Հաւատարմական Ընկերութեան», որ այս տարի բաւական նշանաւոր դեֆիցիտ ունեցաւ։ Առաջիկայ տարին «ՄԵՂՈՒԻ» վեց թէ աւելի պակաս կամ աւելի շատ անգամ հրատարակվելը կախումն կ՚ունենայ ստորագրողների թւից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Ազգային.— Թղթակցութիւններ Ախալցխայից և Քութայիսից։
Քաղաքական. — Աւստրիական արտաքին քաղաքականութիւնից. — Աւստրիա.— Քաղաքական լուրեր։
Մեղուի հեռագիրները։
Մանր լուրեր։
Խառն լուրեր։
Յայտարարութիւններ։
Բանասիրական.— Գ. Շիրվանզադէի «Բագուի նաւթային հարցը և հայերը» վերնագրով յօդուածի առթիւ։

ԱԶԳԱՅԻՆ

ԱԽԱԼՑԽԱ

23 նոյեմբերի

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Նոյեմբեր ամսի 21-ին, երեկոյեան ժամերգութիւնից վերջը, տեղիս անդամ Եղիա աւագ քահանայ Համբարձումեանցը ծանուցմամբ յայտնեց ժողովրդեան, որ միւս օրը, ամսի 22-ին, ճաշի պատարագից յետոյ ժողովուրդը հաւաքուի եկեղեցու գաւթում և ընտրեն երեսուն պատգամաւորներ, որոնց յանձնուի ընտրել մի երեսփոխան պ. Վանցեանի տեղը, և նոյնպէս հոգաբարձուներ Կարապետեան, Եղիսաբեթեան և Նոր-արշալոյս երկսեռ ուսումնարանաց։ (Վերջիններս համար մի քանի անգամ ժողովքներ կազմուեցաւ, բայց այնքան աննշան էր ժողովրդեան թիւը, որ ոչինչ ել չունեցաւ և ուսումնարանները կրկին մնացին առանց հոգաբարձուների)։ Միւս օրը պատարագից յետոյ բարեկրօն Աբրահամ քահանայ Ղազազեանը հրամայեց ժամկոչին չը թոյլատրելու ժողովրդեան գաւթից դուրս գնալու, բայց ժողովուրդը այլ և այլ պատճառ բերելով դուրս եղան և գաւթումը մնացին հազիւ 15 հոգի։ Այս մնացածները հաւաքուեցան հոգևոր կառավարութիւնում. այնտեղ քարտուղարը կարդաց կոնսիստորիայի հրամանագիրը նոր երեսփոխան ընտրելու մասին։ Հրամանագիրը կարդալուց վերջը սկսեցին միմեանց հետ վիճել և վերջապէս նոքա հասան այն եզրակացութեան, որ թէև իրանք չը կան երեսուն մարդ, բայց ընտրեն երեսուն հոգի և նոցա յանձնեն ընտրելու միմիայն մի երեսփոխան Վանցեանի տեղը, իսկ յետոյ արձանագրութեան թուղթը մանածեն ժողովրդեան մէջ ստորագրելու համար։ Եւ այդպէս էլ արին (թէև ընտրվողներից մեծ մասը ներկայ չէին)։

Ցաւելով պէտք է ասեմ, ընթերցող, որ շատ աննախանձելի է Ախալցխայի ժողովուրդը, անտարբեր է նա դէպի իւր ուսումնարանները և ազգային գործերը։ Երեսփոխան պէտք է ընտրել, նա չէ մտածում այդ գործին, ո՞ւմ կ՚ուզեն թող ընտրեն, այս է լսվում ամեն անհատի բերանից, բայց թէ ժամանակին նա վատնեց եկեղեցու փողերը, նա խօսում, այն ժամանակ հայհոյում է, այն էլ ո՞ր տեղերում,—խնջոյքներում, կլուբներում և ուրիշ տեղերում՝ թէ ինչու համար դրան ընտրեցին։ Հոգաբարձու պէտք է ընտրել, նոյնպէս չէ մտածում, բայց նա ամեն տեղ խօսում է առանց մտածելու, հոգաբարձուները շատ ծախս են արել, ուսումնարանները լաւ չեն կառավարվում, ուսումնարանի փողերը ուտում են և սոցա նման շատ բաներ։ Ահա մօտ երկու ամիս է, որ ժամանակաւոր ընտրուած երեսփոխանները՝ Եղիա աւագ քահանայ Համբարձումեանը և պ. Գէորգ Պուտուղեանը հրաժարական են տուել, այս բանը յայտնի է ժողովրդեան, բայց կրկին չէ կամենում ընտրել նորը։ Եկեղեցապատկան կալքերի վարձերը ստանալու ժամանակն է, երեսփոխան չը կայ որ ժողովէ։ Գ. Բաղրատունեանցը իւր պարտքի փոխարէն առաջարկում է իւր անշարժ կալքերը, երեսփոխան չը կայ որ ստանայ։ Այս ամենը տեսնում է ժողովուրդը և կրկին չի կամենում ընտրել նոր երեսփոխան։ Ուսումնարանի ուսուցիչները ահա երեք ամիս է որ ռոճիկ չեն ստանում, այդ մասին ժողովուրդը չէ մտածում, նա ասում է, թող մի քանի ամիս էլ նորը ստանան։ Բայց չեն մտածում, որ եթէ մի ամիս էլ այսպէս մնայ, այն ժամանակը ստիպուած ուսումնարանները գոցում են և իրանց որդիքը մնում են առանց կրթութեան և ուսումի։ Ընթերցող, այս տեսակ վարմունք մի ժողովրդի կողմից դէպի իւր ուսումնարանները և ազգային գործերը՝ թէ՛ զարհուրելի և թէ՛ զարմանալի է։

Հոգևոր կառավարութիւնը ինքն էլ չը գիտէ ինչպէս վարուի հասարակութեան հետ, խնդրում է, աղաչում է որ հաւաքուեն և ապահովացնեն իրանց եկեղեցին և ուսումնարանները. բայց չեն հաւաքվում։ Ուղարկում է հրաւիրատոմսակներ, կրկին չեն հաւաքվում (ինչպէս նոր երեսփոխան և հոգաբարձուներ ընտրելու համար նա ուղարկել էր 120 հրաւիրատոմսներ այլ և այլ անձանց, բայց նոցանից ոչ մինը չէին եկած)։ Ուրեմն, սիրելի ընթերցող, հոգևոր կառավարութիւնը ինչպէս վարուի այս տեսակ ժողովրդի հետ, դուք ինքներդ վճռեցէք։ Իսկ ես ակամայից ստիպուած շնորհակալութիւն մատուցանում եմ այն երեսփոխաններին, որոնք վատնել են եկեղեցու փողերը, որովհետև Ախալցխայի ժողովրդեան նման անտարբեր ժողովրդեան համար հարկաւոր են այնպիսի երեսփոխաններ, որոնք բացի վնասից օգուտ չը հասցնեն եկեղեցուն։ Ցանկանք այս մեր յօդուածը նշանակութիւն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ «ԲԱԳՈՒԻ ՆԱՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ» ՎԵՐՆԱԳՐՈՎ ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԹԻՒ

Կան բուն ազգային խնդիրներ, ինչպէս օր. լեզուի, կրօնի, գրականութեան խնդիրը։ Այդ խնդիրներում ազգասէր լինելը մեր սուրբ պարտականութիւնն է։ Բայց կան շատ ուրիշ խնդիրներ էլ՝ որոնց ազգային կերպարանք տալը—ճշմարտութեան դէմ մեղանչել է, նեղ ազգասիրութիւն անել է։ Այս երկրորդ տեսակ խնդիրներին պատկանում են և տնտեսական խնդիրները։ Եթէ դիցուք օր. Կովկասի բոլոր հողերը պատկանում են հայ բէկերին, իսկ Թուրք և վրացի գիւղացիները նրանց ճորտերն են մենք, ազգային տեսակէտից նայելով այդ խնդրի վրայ և պաշտպանելով հողի այդ այլանդակ կազմակերպութիւնը, նեղ ազգասիրութիւն արած և ճշմարտութեան դէմ մեղանչած կը լինէինք։ Դիցուք հայ վաճառականը, Թուրքերի կամ վրացիների գիւղերը քանդելով՝ հարստութիւններ է դիզում և այդ հարստութեան փշրանքներից մի ազգային դպրոց է կառուցանում, մենք ոչ թէ զզվում ենք այդ վաճառականից էլ, իւր նուէրներից էլ, այլ ընդհակառակը նրան գովում, փառաբանում ենք մինչև երկինք ենք բարձրացնում, իսկ մեր խիղճը նրանով ենք հանգստացնում՝ որ ինչ անենք, հային խօ չի թալանում, Թուրքին կամ վրացուն է թալանում, կրկին ճշմարտութեան դէմ մեղանչում ենք, կրկին նեղ ազգասիրութիւն ենք անում։ Եթէ Հայաստանում մի համամարդկային դժբաղդութիւն—սով է պատահում, մենք իսկոյն յանուն ազգի փող ենք ժողովում. սովը ազգային խնդիր ենք շինում և հաւաքված փողերը եթէ միմիայն հայերի մէջ ենք բաժանում՝ դարձեալ ճշմարտութեան և մարդասիրական զգացմանց դէմ մեղանչում և նեղ ազգասիրութիւն ենք անում։

Դեռ Տաճկահայաստանում՝ ուր տիրապետող Թուրք տարրը բռնանում է հայերի վրայ հասկանալի է այս նեղ ազգասիրութիւնը, բայց բոլորովին հիմք չ՚ունի նեղ ազգասիրութիւնը այն ազգերի մէջ՝ որոնք քաղաքացու իրաւունքներ են վայելում, և միևնոյն քաղաքական պայմանների մէջ են ապրում, ինչպէս օր. Կովկասի վրացիները, հայերը և Թուրքերը։ Հնագիտական ժողովում պրոֆեսոր Խվօլսոնի ճառի առիթով պատահած անցքը ակներև մեզ ապացուցանում է՝ որ վրացի նեղ ազգասէրների հակակրութիւնը դէպի հայերը դեռ տևում է։ Վրացոց ազնուապետական նեղ ազգասէրների կուսակցութիւնը մինչև օրս չը կարողացաւ ազգային—քաղաքական խնդիրները որոշել տնտեսականից։ Նա չը կարողացաւ մինչև օրս, դէպի հայոց բուրժուան ցոյց տալու՝ իւր ատելութեան, թշնամութեան հետ միասին, յայտնել և իւր անկեղծ համակրութիւնը հայոց ազգային—քաղաքական նպատակներին։ Հնագիտական ժողովին ներկայ եղող մի պրոֆեսոր վերադառնալով Մօսկվա և իւր բաւականութիւնը յայտնելով՝ որ Թիֆլիզը մեծ յառաջադիմութիւններ է արել, միևնոյն ժամանակ իւր ցաւակցութիւնը յայտնեց՝ որ հայերի և վրացիների մէջ այդքան մեծ է նախանձը և մրցումը։ Այո, այդ նախանձը Անդրկովկասի ազգերի մէջ կայ և մի յետադէմ և այլանդակ երևոյթ է ներկայացնում։ Մենք մոռանում ենք, որ մեր բոլորիս հայրենիքը միևնոյն է, որ մենք ստիպուած ենք միասին ապրելու, ուրեմն մեր ամենիս օգուտն է հաշտ և բարեկամաբար ապրելը։ Վերջապէս մենք մոռանում ենք՝ որ մեր ժողովուրդը աւելի լուսաւոր և մարդասէր հայեացք ունի ազգերի յարաբերութեանց վրայ քան թէ մեր, իրեն «լուսաւոր» և «ինտելլիգենցիա» անուանող դասը։ Կովկասի բոլոր ազգերը լաւ պէտք է գիտենան՝ որ եթէ բուն ազգային խնդիրները մեզ միմեանցից հեռացնում են (միայն հեռացնում և ոչ թէ թշնամացնում) ընդհանուր համամարդկային և տնտեսական խնդիրները մեզ սերտ կապերով կապում, միացնում են։ Մենք կովկասեցիներս ամենքս էլ չափից դուրս ազգասէր ենք և բնաւ հայրենասէր չենք։ Ամեն խնդրի վրայ մենք միշտ ազգային տեսակէտից ենք նայում և բնաւ ոչ հայրենասիրական կէտից։ Ուրիշ երկիրներում այդպէս չէ։ Շվէյցարացին իրեն աւելի շվէյցարացի է զգում՝ քան թէ ֆրանսիացի, կամ գերմանացի, թէև ինքը այդ ազգութիւններին էլ լինէր պատկանելիս։ Նոյնը կարող ենք ասել և ամերիկացոց մասին, բայց կովկասեցին առաջ հայ է, վրացի է, Թուրք է և ապա կովկասեցի, բայց ոչ . . . քարը գլուխս, եթէ այդպէս էլ լինէր. կովկասեցին միայն վրացի է, հայ է, Թուրք է, բայց երբէք կովկասեցի չէ։ Ասածներս խօսք չեն, այլ իսկութիւն. ահա մի՜ աչքի զարնուող փաստ։ Մի քանի ամիս սորանից առաջ Բագուի մէջ մի պէտք է ունենա՞յ Ախալցխայի հասարակութեան համար, պէտք է սթափե՞ն իրանց քնից, պէտք է ապահովացնեն իրանց եկեղեցին և ուսումնարանները, թէ՞ ուրիշ յօդուածների նման պէտք է լինի «ձայն բարբառոյ յանապատի»:

Քողոտոյեւ

ՔՈՒԹԱՅԻՍ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Մեծապատիւ ամուսինք Աղէքսանդր և Ռօզա Անանեանք, ի յիշատակ հոգւոյ իւրեանց վաղամեռամ Յովհաննէս զաւակի, որ իւր մահկանացուն կնքեց Տփխիս քաղաքին մէջ հոկտեմբեր ամսի 8-ին, հինգ հարիւր ռուբլի նուիրեցին յօգուտ Քութայիսի հայոց ուսումնարանիս, որ առանց այդ էլ մինչև ցարդ միշտ նոցա առանձին խնամքին վայելած է:

Ուսումնարանական վարչութիւնս արժանավայել հանդիսիւ հոգեհանգիստ կատարելուց զատ՝ կարգադրելով ևս, որ յիշեալ գումարի տոկոսիքով ամենաչքաւոր աշակերտներից մինն հանգուցեալի անուամբ կրթութիւն ստանայ սոյն ուսումնարանիս մէջ, այսու խորին շնորհակալութիւն կը մատուցանէ հրապարակաւ՝ թէ՛ իւր և թէ՛ համօրէն տեղիս հայազգի հասարակութեան կողմանէ մեծապատիւ նուիրատուաց և կը բարեմաղթէ յերկնից մխիթարութիւն և սփոփանք նոցա վշտակրեալ սրտին և արևշատութիւն մնացեալ զաւակաց:

Դասաւք ա. ք. Նալբանդեանց

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.

«Новости» ռուս թերթի թղթակիցը գրում է Վիեննայից. «Մի քանի թերթերի տեղեկութիւններին նայած, մեր արտաքին գործերի պաշտօնեան արդէն այնպիսի գործունէութիւն է ցոյց տալիս, որը կապած է նրա նոր պաշտօնի հետ: Նա, ինչպէ՛ս ասում են, սկսել է բանակցութիւններ Ռուսիայի հետ ոչ թէ միայն «հայոց խնդրի» վերաբերմամբ, այլ և աշխատում է հեռացնելու այն արգելքը, որը կարող է տեղի ունենալ այսպէս կոչուած բօսնիական խնդրում կամ աւելի պարզ ասենք, այդ բռնած գաւառների Աւստրիայի հետ միացնելու խնդրում: Բացի այդ, պաշտօնեան աշխատում է իրացնելու երկու կայսրների ենթադրած տեսութիւնը: Այս լուրերը հերքելու համար կարող եմ հաղորդել ձեզ հեղինակութիւն ունեցող անձինքներից ստացած տեղեկութիւնների հիմունքի վերայ հետևեալը, որ «հայոց խնդիրը» խիստ զբաղել էր Վիեննայի արքունիքը դեռ կոմս Կալնօկին արտաքին գործերի պաշտօնեայ նշանակելուց առաջ, բստորում Պօլսից և Լօնդօնից ստացած դիպլօմատիկական տեղեկութիւններում արդէն յիշվում էր Պետերբուրգի արքունիքի և Դրան մէջ գոյութիւն ունեցող մասնաւոր բանակցութիւնների վերայ, որոնք հիմնուած էին այն մտքի վերայ, որ Դուռը զիջանի ամբողջ Հայաստան նահանգը Ռուսիային այնպիսի պայմաններով, որոնց հետ ոչ մի կերպով չէին կարող համաձայնուել այն տէրութիւնները, որոնք արևելեան խնդրի վճռելու մէջ մօտիկ շահեր ունին:

«Ոչինչ կասկած չը կայ այն բանում, որ Աւստրիան չէր կարող ընկրկել իրագործելու իւր գլխաւորութիւնը, այսինքն միացնելու բռնած Բօսնիա-Հերցեգովինա նահանգները առանց կանխաւ Ռուսիայի համաձայնութիւնը ստացած լինելու»:

Ինչ որ մենք գիտենք, այդ մենք գիտենք, և այսօր չէ, որ մենք գիտենք: Մենք Վիեննայում հրատարակվող ֆրանսիական «Journal d'Orient» թերթի ուշադրութիւնը դարձնում ենք Աւստրիայի արտաքին քաղաքականութեան վերայ այս դէպքում:

Վիեննայում հրատարակվող Ֆրանսիական թերթը արդէն հայերի գործին ճշմարիտ ծառայութիւն արած կը լինի, եթէ հայերի իրաւունքները, հայերի արդարացի պահանջը դէթ Վիեննայում, Վիեննայի դիպլօմատների առաջ պաշտպանէր, աւստրիական պարլամենտում հայոց խնդիրը յարուցանել տալ կարողանար:

Եթէ Աւստրիան Հայաստանի բաղդի վերայ կարգադրութիւններ անելը իւր կոպիտ ոյժի վերայ է հիմնում, այդ չը գիտենք, իսկ եթէ ոչ, չը գիտենք թէ աւստրիական կառավարութիւնը ինչ գործ ունի Հայաստանի հետ: Այո՛, իրաւական կէտից մէկ կերպով կապուած է Աւստրիան Հայաստանի հետ, որովհետև Աւստրիան այն տէրութիւններից մէկն է, որը ստորագրել է Բէրլինի պայմանագրում 61-րդ յօդուածը, և ինչպէս յայտնի է մեծ տէրութիւնները պէտք է հսկեն այն բարենորոգումների և վերանորոգութիւնների վերայ, որ պարտաւոր է Դուռը մտցնելու Հայաստանում: Այս այնպիսի մի որոշ և պարզ գրած յօդուած է, որ արժէր յիշեցնել այս աւստրիական կառավարութեան:

ԱՒՍՏՐԻԱ

Աւստրիայում հասարակաց կարծիքը խիստ վրդոված է Ռումինիայի թագաւորի գահական ճառից: Պեշտում հրատարակվող «Pesther Lloyd» թերթը սուր դատողութեան տակ ձգելով ռումինական կառավարութիւնը ցոյց է տալիս այն հանգամանքի վերայ, որ Ռումինիային կարելի է անկախ պետութիւն համարել գուցէ միայն ձևական կէտից. իսկապէս ռումինական անկախ արտաքին քաղաքականութիւն չի կարող գոյութիւն ունենալ: Հանգամանքների ոյժին հետևելով այս պետութիւնը անպայման պէտք է ենթարկուի մի որևէ մեծ տէրութեան ներգործութեանը, որը իշխում է արևելքի վերայ: Որովհետև Անգլիան և Ֆրանսիան այն տէրութիւնները չեն, որոնց քաղաքական գիտումները ստիպում է Ռումինիան հաշւի առնելու, ուրեմն մնում են երկու տէրութիւններ՝ Ռուսիան և Աւստրիան, որոնցից մէկի ներգործութեան տակ մնալու պէտք է անպայման որոշուի Ռումինիան, եթէ նա իւր գոյութիւնը չէ կամենում կարտի վերայ դնել: Իսկ Վիեննայում հրատարակվող կէսպաշտօնական «Presse» թերթը ցոյց է տալիս թէ ինչպէս բարկացած է աւստրիական կառավարութիւնը Ռումինիայի վերայ: Այդ թերթը ասում է. «Չէր կարելի սպասել, որ Վիեննայի արքունիքը ուրիշ դերք բռնէր ռումինական գահական ճառի դէմ ամբողջ աւստրիական մամուլի միաձայն յայտնած անհաւանութեան առաջ: Եթէ երիտասարդ թագաւորութիւնը դեռ այնպէս երիտասարդ է, որ իւր իրաւունքն է համարում անտես առնել միջազգային քաղաքականութեան տարրական կարգերը, այն դէպքում նա պէտք է խոնարհի յանդիմանութեանը, իսկ եթէ հարկաւոր լինի—աւելի խիստ պատժին: Բուքարէստում, ինչպէս երևում է, մինչև օրս գործի վերայ նայում են խիստ թեթև աչքով: Գուցէ վաղը այնտեղ խելքի գան: Հօ չե՞ն կարող գիտակցութեան չը գալ Բուքարէստում, որ այնպիսի մի մեծ տէրութիւն, ինչպէս Աւստրիան է, եթէ մի տեսակ բանի ձեռնամուխ է լինում, նա հաստատ վճռած կը լինի, ասելով ա, բ, գ, արտասանել, և այբուբենի մնացած բոլոր տառերը: Որ Աւստրիան երկար նայում է համբերութեամբ, բայց միանգամ վճռուելով գործելու, ցոյց է տալիս էներգիա Բալկանեան թերակղզիի կավուրների (իտալական երևելի պաշտօնեայ, որը հայրենիքի ազատութեան համար աշխատելով գլխաւորապէս Աւստրիայի դէմ էր) վերաբերմամբ—այդ մասին պ. Բրացիանոն (ռումինական պետական անձն) իւր ընկերների հետ միասին կարող էին համոզուել, մտաբերելով այն վիճակը, որին հանդիպեց իրենց սերբիական ընկեր (Ռիստիչը սերբիական պաշտօնէութեան գլուխ էր և աւստրիական շահերի դէմ, աւստրիական կառավարութեան ներգործութեամբ Ռիստիչը պաշտօնէութիւնից ընկաւ):

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Իտալական արտաքին գործերի պաշտօնէութեան բիւջէի համար մասնաժողովի զեկուցանող Դօննանին հետևեալ խօսքերով վերջացրեց իւր զեկուցումը. «Վերջին ժամանակումս կատարուեցան երկու միմեանց փոխադարձ լրացնող մեծ դէպքեր, մէկը ֆրանս-իտալական առևտրական պայմանագրի կապելը, միւսը Վիեննայի տեսութիւնը: Ազգի ահագին մեծամասնութիւնը անկեղծօրէն ուրախանում է այս երկու իրողութիւններով, որ փարատեց այնքան կասկածանք և հեռացրեց այնքան վտանգ: Թագաւորի Վիեննա գնալը և առևտրական պայմանագրի ստորագրելը մեզ համար ոչ այլ ինչ է նշանակում, քան Եւրօպայի խաղաղութիւնը և Իտալիայի հանդարտութիւնը»:

Պօլսում դրագոմանների ժողովը միաձայն մերժեց Դրան կարգադրած ցերէմոնիալը հիւպատոսների վերաբերմամբ, ինչպէս հակառակ կապիտուլացիաների (Թիւրքիայում եւրօպական տէրութիւնների հետզհետէ սուլթաններից ստացած արտօնութիւններին է վերաբերում) և պայմանագրերի: Այդ պատճառով տէրութիւնների ներկայացուցիչները կը ներկայացնեն Դրան հաւաքական ծանուցագիր: Արդարութեան պաշտօնեան հրամայել է նահանգապետին յանձնել թրքական դատարանների բոլոր յանցանքների վերաբերեալ գործերը, որոնք կատարուել են օտարահպատակներից օտարահպատակների դէմ: Այս վճիռը, որը ուղղակի հակառակում է կապիտուլացիներին, դեսպանների հաւաքական բողոքը կը յարուցանէ:

—

Էբէրդինում (Անգլիա) մեծ ժողով տեղի ունեցաւ 40,000 շոտլանդացի վարձականների ուղարկած նուիրակների: Այդ տեղ հաւաքուեցան 3000 հոգի, որոնց թւում և մի քանի պատգամաւորներ: Ընդունած զեկուցումներում պահանջում են Շոտլանդիայում հողային վերանորոգութիւններ և ամենից առաջ վարձած երկրի համար արած բարւոքումների համար վարձականներին վարձատրութեան սկզբունքի հաստատութիւնը:

—

Աւստրիական պատգամաւորների ժողովում տեղի ունեցաւ խիստ աղմկալից վիճաբանութիւն արդարութեան պաշտօնեայ Պրաժակի գործողութեան մասին դիմադիր մամուլի վերաբերմամբ: Պրաժակը անուանեց դիմադրողներին՝ «օրէնքի խանգարողներ», ձախ կողմի ներկայացուցիչներն էլ նրան մեղադրեցին օրինական կարգի խանգարելուն մէջ: Ընդհանրապէս կարելի է ասել, որ կուսակցութիւնների փոխադարձ յարաբերու-

---

տխուր անցք պատահեցաւ. Ռուս տակառագործները կռվեցին Թուրք ամբոխի հետ. Կռիւը բաւական երկիւղալի և անախորժ կերպարանք ստացաւ. Այդ կռիւը ինքնըստինքեան մի յիմարութիւն էր և տգիտութեան արգասիք և ամեն մտածող և խելացի մարդ պէտք է աշխատէր այդ կրակի առաջն առնել և ամբոխը հանգստացնել: Բագուի հայերը այդ կողմանէ շատ յարմար դրութեան մէջ էին, եթէ նրանք ցանկանային կարող էին այդ կռվի և զուր արիւնհեղութեան առաջն առնել: Մի կողմից ռուսների հաւատակից լինելով, իսկ միւս կողմից Թուրքերի հայրենակից, բացի այս, այդ երկու ազգերի հետ էլ ամուր տնտեսական կապեր ունենալով, նրանք պարտաւոր էին և հեշտութեամբ կարող էին այդ կռվի առաջն առնել: Բայց եթէ նրանք այդքան կամք և մարդասիրութիւն չ'ունէին, գոնէ բոլորովին չը պիտի մասնակցէին այդ կռվին և պիտի կատարեալ չէզոքութիւն պահպանէին: Եթէ ռուսները մեր հաւատակիցներն են, չը մոռանանք՝ որ Թուրքերը մեր հայրենակիցներն են՝ որոնց հետ մենք կապված ենք մեր անցեալով, ներկայով և ապագայով: Բայց սրտի ցաւօք իմացանք՝ որ հայերը մասնակցել են այդ կռվին խեղճ Թուրք ամբոխի դէմ: Այդ կռվի մէջ հայերը մի շատ տըգեղ և անվայել դեր են խաղացել: Եթէ մեր մէջ հայրենասիրական զգացմունք չը կայ՝ որ մենք կարողանանք սիրել Թուրքերին, սիրել սրտով և անկեղծաբար, գոնէ մեր ազգային շահերը աչքի առաջ ունենալով, պէտք է Թուրքերի հետ աւելի սիրով և բարեկամաբար ապրենք: Հայերի և Թուրքերի ապագան միմեանց հետ սերտ կերպով կապված է և այս երկու ազգերի եղբայրաբար ապրելը օգտակար է երկուսին էլ:

Դառնանք այժմ մեր յօդուածի բուն առարկային. բայց մենք անհրաժեշտ համարեցինք գրել այս փոքր ինչ երկար յառաջաբանը՝ որը որոշում է մեր տեղական խնդիրների վրայ ունեցած տեսակէտը: Մեր այս յօդուած գրելուն առիթ եղաւ պ. Շիրվանզադէի «Մշակի» 190 համարում տպած «Բագուի նաւթային հարցը և հայերը» վերնագրով յօդուածը: Պարոնը շատ ճշմարիտ է խօսում՝ որ եթէ հայերը ուշադրութիւն չը դարձնեն նաւթային խնդրի վրայ, այդ գործը կամաց կամաց կ'ընկնի եւրօպացիների ձեռքը: Նա երկար խօսում է պ. Նօբէլի գործունէութեան մասին, որը իւր խելքի և կապիտալի շնորհով կարողացել է նաւթային գործը իւր ձեռքը ձգել և նրա արդիւնագործութեան և վաճառման կլիւը ձեռք առնել: Նօբէլը թէև գլխաւոր, բայց միակ ախոյեանը չէ տեղական նաւթի գործարանատէրերին: Պալաշկօվսկին և Բագուի նաւթային ընկերութիւնը (կօկօրեվի) նըմանապէս զօրեղ և երկիւղալի ախոյեաններ են տեղական գործարանատէրերին: Պ. Շիրվանզադէի այս դատողութիւնները շատ յարգելի են և խելացի:

Այո՛, մեր Կովկասի նաւթային հարստութիւնը շատերին ատամի տակին է մազ թողել, շատերի մէջ է շահասիրական ցանկութիւններ ծնեցնել: Բանը հասել է այնտեղ, որ այնպիսի յարգելի մարդ՝ ինչպէս երևելի պրօֆէսօր Մէնդելէևն է, նեղ ռուսական շահերը պաշտպանելով առաջարկում է նաւթը խտակելու համար գործարանները շինել՝ ոչ թէ Բագու, ինչպէս պահանջում է առողջ դատողութիւնը, այլ Վօլգայի ափերում: Այդպիսով յարգելի պ. պրօֆէսօրը մտածում է բուն Կովկասի հարստութիւնը քաշել դէպի ներքին Ռուսաստան: Ինչքան որ էլ յարգենք մեծ գիտնականին, այնուամենայնիւ պէտք է խոստովանենք՝ որ նրա այդ առաջարկութեան մէջ տեսնում ենք ոչ թէ բուն գիտնական, շահախնդրական ցանկութիւնից ազատ կարծիք, այլ բուն բուրժուայի և նեղ ազգասիրական հայեացք: Մեր դժբաղդութիւնից և տգիտութիւնից պրօֆէսօր Մէնդելէևի այդ առաջարկութիւնը վաղուց արդէն իրագործել է նրա բարեկամ պ. Ռագօզինը, որը իսկ Վօլգայի վրայ ունի իւր սեփհական գործարանը, որը մաքրում է նաւթը և նրա մնացորդից էլ զանազան իւղեր է պատրաստում: Ասում են, որ պ. պրօֆէսօրն էլ մաս ունի պ. Ռագօզինի գործարանի եկամուտներից: Չը գիտեմ այս լուրը ինչքան ճշմարիտ է, միայն այսքանը յայտնի է՝ որ պ. Մէնդելէևը Ռագօզինի լաւ բարեկամն է և նրա լաբօրատորիայում շատ անգամ նաւթի հետազօտութեամբ է պարապում և այդտեղ մի քանի նոր գիւտեր է արել: Արդեօք պ. պրօֆէսօրը առաջարկելով նաւթի գործարաններ շինել Վօլգայի ափերում աչքի առաջ ունեցել է պ. Ռագօզինի շահերը՝ թէ՞ բուն ռուսական շահերը, մեզ յայտնի չէ, բայց ինչ որ էլ լինի մենք չենք կարող չը բողոքել յարգելի պրօֆէսօրի առաջարկութեան դէմ, որը միանգամայն ընդդէմ է տնտեսական օրէնքներին: Իսկ տնտեթիւնները՝ խիստ լարուած են և գրգռուած։ Այս՛ թէ մամուլի և թէ պարլամենտի մէջն է երևում։

—

Ֆրանսիական կառավարութիւնը խընդրեց պատգամաւորների ժողովից իրաւունք 43,000,000 ֆրանկի կրէդիտ, գրահաւոր նաւատորմը ծանր թընդանօթներով զինելու համար։ Ժիւլ Սիմօնը մտադիր է ծերակոյտի ժողովում դուրս գալ Թունիսեան արշաւանքի համար նշանակած լրացնող կրէդիտի դէմ։ Այս դէպքում մեծ հետաքրքրութեամբ սպասում են նրա և Գամբէտտայի մէջ ճարտասանական կռւին։ Նախագահ Գրէվին ստորագրեց լուսաւորութեան պաշտօնեայի ներկայացրած դէկրէտը գիմնազիոններում կրօնի ուսման պարտաւորեցուցիչ լինելու փոփոխման մասին։ Ուսումնարաններում ուղարկած երեխաներին ծնողները կարող են հիմա յայտնել, կամենում են նրանք, թէ չեն կամենում, որ իրենց իրենց երեխաները կրօն ուսանեն։

—

Գիտօն դատարանում դարձաւ հասարակութեան և խնդրեց, որ իրեն փող ուղարկեն արդարութեան չահերի համար և թէ իւր պաշտպանութեան համար։ Նա հասկացրեց, որ փողը կարելի է առանց անունը յայտնելու ուղարկել Սկովիլլի, իւր փաստաբանի վերայ։ Իրեն գրած չատ հարցերին պատասխանելով Գիտօն ասեց չատերի մէջ, որ ֆիզիկապէս նա երկչոտ է, և միշտ աշխատել է վտանգից հեռու իրեն պահելու, բայց բարոյապէս, երբ նա իւր մէջ աստուածութեան պահպանութիւնը զգում է, այն ժամանակ նա այնպէս քաջ է դառնում ինչպէս առիւծ։ Վերջումը նա գրգռւեցաւ և դադարեց հարցմունքներին պատասխանելուց։ Նրա այն խօսքի համար, որ նա հաւատում է տասը պատուիրանքը, դատաւորը յիշեցրեց, որ այնտեղ նոյնպէս ասուած է «մի սպանիր»։ Գիտօն գրգռւած մերժեց այդ հարցմունքին պատասխանելու։ Նա պնդեց որ դատարանը պէտք է վճռէ միայն մի բան. գործե՞լ է նա, Գիտօն, երկնքի կարգադրութեամբ թէ ոչ։ Ամենից աւելի նրան գրգռում էր դատաւորների գործածած «սպանութիւն» խօսքը։ Այս նրան ստիպեց բարձրաձայն կանչելու. «Ի՞նչ էք դուք ամենքդ պնդում—«սպանել», «սպանութիւն»։ Կամ գուցէ ձեզ դուր է գալիս այս խօսքերը։ Ոչինչ կարիք չը կայ ամեն բան այդ կէտի վերայ դարձնելու։ Այն արտաքին միջոցը, որով ես նախագահին հեռացրի, ոչինչ յարաբերութիւն չ'ունի իմ գործիս հետ»։

Մեղադրեալին աշխատեցին ստիպելու, որ ցոյց տայ այն օրը, երբ նրա մէջ առաջին անգամ երևեցաւ իբրև թէ «երկնքից տուած կարգադրութիւնը», բայց նա կանչում էր. «Թողէք այդ դատարկ զրոյցները. գիտացէք, որ ես պատրաստ էի նախագահին սպանելու ամեն ժամանակ յունիսի կիսից սկսած մինչև յուլիսի 2-ը, եթէ ինձ պատեհ առիթ լինէր անելու այդ ամերիկական ժողովրդի բարութեան համար»։

—

Ռումինական «Romanul» թերթը իւր խիստ լեզուն չէ թեթևացնում Աւստրիայի դէմ։ Գալով աւստրիական կառավարութեանը, որով աւստրիական ներկայացուցիչը Ռումինիայում առժամանակ պիտի դադարեցնէր ռումինական կառավարութեան հետ անձնական յարաբերութիւնները, այդ թերթը հեգնական ձևով ասում է, որ բոլոր օտարականները և դիպլօմատիկական խումբը, որոնք ապրում են Բուքարէստում կը վըկայեն, որ այդ կարգադրութիւնը գրեթէ ոչինչ ազդեցութիւն չը գործեց ռումինական կառավարութեան վերայ։

Հետաքրքիր է այս աւստրիա-ռումինական վէճի վերջը տեսնելը։

«ՄԵՂՈՒԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2-ին դեկտեմբերի։ Արքունի խորհրդարանը 30-ին նոյեմբերի ընդունեց ամեն տեղ իջեցնել հողագինը մի ռուբլի իւրաքանչիւր հոգիի համար, սրանից 12 միլիօնի մնացորդ գումարը գործ դնել մասնաւորապէս հողագինը իջեցնելու համար աւելի կարօտութիւն զգացող տեղերում։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԴՋԼԱՐԻՑ մեզ գրում են.—Մեր հոգևոր կառավարութեան մէջ բարեփոխութիւններ են լինում. անդամներից երկուսը դուրս են եկել և նրանց տեղ ուրիշ երկու աւելի հասկացող քահանայք են ընդունել։ Ցանկանում ենք յաջողութիւն նոր ընտրուածներին։ Կարգապահին էլ, ինչպէս լսում ենք, հրաժարեցրել են։ Իմ համեստ կարծիքով կարգապահը միայն փոխանորդը լինի լաւ է և ընտրի քահանաներից էլ մէկին, որը ժրագլուխ է, իրան օգնական։

—Սուրբ Գէորգի երեսփոխան կ. Բերոյեանցը չի տալիս, ինչպէս լսում ենք, դպրոցի հասոյթն պատճառ բերելով թէ արդիւնք չը կայ։ Ապա ուր է գնում տարեկան 2,500 ռ. արդիւնքը, որ չի կարողանում դրանից տարեկան 550 ռ. փող տալ դպրոցին։ Ի՞նչ ծախս ունի, ինչե՞ր է չինել վանքի համար։ Ճախից և երկու կոտր տախտակից կամուրջ չինելով, ծեծած ագուռի ջրով պարտէզի վանդակը ներկելով՝ միթէ վերջանում է այդքան փողը։ Վանքի տները քարուքանդ, կեխտոտ և ցուրտ, „եկողները փոխանակ լաւանալու ցրտից հիւանդանում են և գնում, պատահել է և մեռել։ Ես ինքս աչքերովս եմ տեսել, որ տակառներով իւղը լիքն է լինում միշտ, ամեն օր ուխտաւորներ, տաւար և ոչխար է մորթվում, ուր է գնում, ո՛ր հոգևորականը կամ աշխարհականն է օգտվում դրանից։ Պ. Բերոյեանցը ասել էր դպրոցի գործավարին, թէ հոգաբարձուք Աստուած խո չեն. բաս ինչն ինչ իրաւունք ունի բղաւելու հոգաբարձութեան ուղարկած մարդու վերայ։

⁂

Շնորհակալութեամբ ստացանք պ. Մանդինեանից նրա փոխադրած «Կեանքի հանգամանքների համեմատ թուաբանութիւնը» ծխական դպրոցների Դ. տարուայ դասընթացք և Ա. Բ. Գ. տարիների համար հրահանգ։ Գինն է 75 կ.։

⁂

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են, որ քաղաքի մի քանի բնակիչներ իրանց բողոքական անուանելով հալածուած էին համարում, այժմ, իբր հալածանքից փախչելով, կամենում են տեղափոխուել Ղարս քաղաքը։

[redacted]

Գիւտ քահանայ Աղանեանցը խնդրում է մեզ տպագրել հետևեալը.—Որովհետև չատերը թէ նամակներով և թէ բերանացի դիմում են ինձ իմանալու, թէ ինչ դրութեան մէջ է «Ջէստէրդօնի ժառանգը» պատկերազարդ վէպի թարգմանութեան հրատարակութիւնը, ուստի պարտք եմ համարում յայտնել նոցա և ամեն հետաքրքրողին, թէ վէպի տպագրութիւնը արդէն աւարտած է և սպասում եմ Ս.Պետերբուրգից պատկերներին, որոց ստանալուն պէս անյապաղ կը հրատարակուի։

⁂

Պ. Կրպօն մեզ հաղորդում է.—Կուլպի Նորաշէն։ Աստուածածնայ եկեղեցու արևելեան պատի ուղղութեամբ խանութներ են չինուած, որոնք անաւարտ մնալով, հասարակաց արտաքնոցներ են դառել։ Մենք զարմանում ենք պ. երեսփոխանի վերայ, որ հակառակ քրիստոնէական եկեղեցու սովորութեան և միանգամայն բարոյականութեան եկեղեցու ներքին ետևը անմիջապէս պատին կպած այդպիսի ապականութեան տեղ են չինած հասարակութեան համար։

*

Նոյնը հաղորդում է.—Յիշեալ եկեղեցու երեսփոխանը չատ սակաւ է այցելում եկեղեցին և այդ պատճառով քաղաքիս այդպիսի կենդրոն տեղը եկեղեցին մնացած է բոլորովին անչուք դրութեան մէջ, մինչդեռ այդ եկեղեցին ոչ պակաս ուրիշ եկեղեցիներից արդիւնք ունի։ Մի գիւղի եկեղեցին առաւել չքեղ է, քան Թիֆլիզի այդ նշանաւոր ուխտատեղին։ Եկեղեցին չ'ունի կանոնաւոր տիրացու. և թէպէտ կայ մի փոքրիկ երգեցիկ խումբ ծխական ուսումնարանի աշակերտներից, բայց օրինաւոր տիրացուի բացակայութիւնից և եղածների խառնիճաղանճ երգեցողութեան չնորհիւ խումբը ոչինչ գործ չէ կատարում։ Զարմանում են, թէ ինչու եկեղեցու արդիւնքները նորա պայծառութեան համար գործ չեն դնվում, քանի որ նըրանցից կոպէկ չէ տրվում ուսումնարանին, որ ունի իւր եկամուտները։ Մեզ պատմում են, և ինչպէս երևում է, այդ եկեղեցին բարձի թողի անելու գլխաւոր պատճառը էլի երեսփոխանի և տեղւոյն աւագ քահանայի միմեանց մէջ ունեցած անվերջանալի դժգոհութիւնն է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ալէքսանդր Դումա-որդու վերջին «Բաղդադի իշխանուհի» դրաման, որը Փարիզի «Ֆրանսիական Թատրոնում» առաջին անգամ ներկայացրին, և այդ անգամից նա աղմկով վայր ընկաւ, և այս անկումից էլ ոտքի չը կանգնեց ոչ մէկ տեղ, որտեղ էլ որ նրան ներկայացրին, մանաւանդ երբ գլխաւոր դերը կատարողը լինում էր թոյլ և դերասանուհու միջոցները չէին ներում կատարելու այն, ինչ որ պահանջում էր հեղինակը։ Այս ամսիս 13-ին առաջին անգամ խաղացին այդ պիէսան Բէրլինի «Նացիօնալ-Թատրոնում» (առաջին անգամ ընդհանրապէս Գերմանիայում) և դա, զարմանալի երևոյթ, մեծ յաջողութիւն ունեցաւ, չնորհիւ գլխաւոր դերը կատարող օր. Կաթի Ֆրանկի։ Այնուամենայնիւ պէտք է ասենք, որ Դումայի այդ պիէսան այնչափ վիրաւորիչ, ծիծաղելի յարձակումներ է անում ճշմարտութեան դէմ, որ չը նայելով նրա մէջ մի քանի խիստ ազդու տեսարանների իւր ամբողջութիւնովը մեզ վերայ անհամ տպաւորութիւն է թողնում։

⁂

Անգլիացիք տարօրինակ բաներ չատ կ'ընեն։ Իրենց կատակներն ալ, զոր ամենամեծ հանդարտութեամբ կ'ընեն միշտ, նմանապէս տարօրինակ են։

Ահաւասիկ նոր օրինակ մ'ալ.

Վայելուչ հագնուած և Պատուոյ Լէգէօնի չքանչան կրող պարոն մը սեպտ. 18/30-ին օրը Փարիզի Թամբլ փողոցին մէջ 191 թիւ քաքարավաճառին խանութը մտնելով՝ 15 ֆրանքի չաքարեղէն և քաքար գնեց, և դուրս ելնելով Պըրթայն փողոցին անկիւնը կեցաւ և զանոնք Վոլթա փողոցի դպրոցէն ելնող տղայոց բաշխեց։

Տղայոց ուրախութիւնը նկարագրել աւելորդ է։

Սակայն տղոցմէն ոմանք չկրնալով բաժին ստանալ, և բնականաբար տըրտմելով, առատասիրտ արտակեդրոնն ըսաւ անոնց. «Մտէք քաքարագործին խանութն, և ինչ որ կայ առէք, կերէք, ամեն բան կոտրտեցէք, ես անոնց գինը կը վճարեմ»։

Տղաք երկրորդել չը տուին այս հրամանն. անմիջապէս խուժեցին խանութէն և բոլոր գտնուած քաքարներն ու չաքարեղէնները կողոպտեցին, և այս աւարառութեան միջոցին բազմաթիւ բիւրեղեայ պնակներ կոտրտեցան։

Քաքարավաճառը բնականաբար զայրանալով՝ փռան թիակով մը տղայքը վռնտելու կ'աշխատէր։ Անծանօթ պարոնը ջանաց հանդարտեցնել զայն՝ հաւաստելով թէ ինք պատրաստ է ամենուն գինը վճարելու։ Քաքարավաճառը մարդ ղրկելով ոստիկանութեան զինուորներ կոչեց, որք չատ չ'անցան հոն հասան ոստիկանութեան տեսչին հետ։ Նոյն միջոցին ամեն բան լմնցած էր խանութին մէջ, ոչ քաքար մնացած էր, ոչ պտուղ, ոչ չաքարեղէն։

Անծանօթն առանց բնաւ այլայլելու ոստիկանութեան տեսչին և զինուորաց ներկայութենէն, հարցուց պաղարեամբ թէ քանի ֆրանքի բան կերուած ու խորտակուած էր։ Քաքարավաճառը պատասխանեց—ութ հարիւր ֆրանքի։ Անծանօթը լրջաբար թղթապանակը բացաւ և մէջէն 1000 ֆրանքնոց տոմսակ մը հանելով վճարեց, և մեկնեցաւ գնաց, առանց իւր անունն յայտնելու։ Տեսան որ Պըրթայն փողոցին հրապարակէն կառք մը նստելով, ըսաւ կառապանին. «Սթրասպուրկի կայարանն»։ Եւ հեռացաւ գնաց ապչեալ թողլով քաքարավաճառն և ոստիկանութեան տեսուչն։ Իսկ տղայք ցնծագին հուրանելով անծանօթ Անգլիացւոյն ուղեկից եղան բաւական տեղ։

(Մասիս).

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ։
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

սական օրէնքները պահանջում են որ հում նիւթերը, եթէ հանգամանքները ներում են, արդիւնագործվին այնտեղ՝ ուր նրանք ստացվում են։ Ոչինչ չի արգելում Բագուն այդպիսի մի արդիւնագործութեան կենդրոն չինել, ուրեմն ինչ կարևորութիւն կայ նաւթի գործարանները չինել Վօլգայի ափերում։ Մեր կարծիքով աւելի խելացի միտք է յայտնում պ. Պրօցէնկօն, ասելով, որ մենք ժամանակով կարող ենք Բագուից մեր սեպհական Մանչէստէր ստեղծել Միջին-Ասիայի համար, այնտեղ հիմնելով մեր սեպհական բամբակ գործելու ֆաբրիկաները, որի համար բամբակը ձեռաց կ'ունենանք Մուղանու և Միլի անապատներից, որոնք ինչպէս յայտնի է չուտով պիտի ոռոգվին և գուցէ անընակ անապատներից մչակւող բամբակի ագարակներ փոխվին, իսկ իբրև այրվող նիւթ կ'ունենանք Բագուի առատ նաւթը *)։

Պ. Պրօցէնկօյի միտքը մենք աւելի խելացի ենք համարում՝ որովհետև նա համապատասխանում է անտեսական օրէնքներին։ Պ. Պրօցէնկօն Մէնդելէևի պէս չէ դատում, ապա թէ ոչ նա էլ կ'առաջարկէր Բագուի նաւթը Վօլգայի ափերում մաքրել, իսկ Մուղանու անապատի բամբակը Մօսկվայի և Պետերբուրգի գործարանները տանել։ Բագուի նաւթը, այո, չատերի մէջ է չահախնդրական ցանկութիւններ ծնեցնել, նա զանազան բաղդախնդիր Տվէդելներ, Բագօզիններ և Նօբէլներ է ստեղծել, բայց նաւթը Կովկասի հարստութիւնն է և նա պիտի Կովկասի բնակիչների սեպհականութիւն լինի և ոչ թէ օտարների։

Բայց միենոյն ժամանակը այս էլ չը պէտք է մոռանալ՝ որ նաւթը ոչ հայի, ոչ թուրքի, ոչ վրացու սեպհականութիւն է, այլ նա այդ բոլոր ազգերինն է անխտրաբար։ Նաւթը հողի, երկրի սեպհականութիւնն է և այդ հարստութիւնը պիտի վայելեն այդ հողի վրայ ապրող բոլոր ազգերը։ Ահա այս տեսակէտից նայելով, մենք պ. Շիրվանզադէի առաջարկութիւնը նեղազգասիրական ենք անուանում։ Նաւթը ազգային խնդիր չէ, նա առանձնապէս հային չի պատկանում, ուրեմն ինչու խորհուրդ տալ հայերին նաւթի մօնօպօլեան իրանց ձեռքը ձգել։ Ասացէք, խնդրեմ, պ. Շիրվանզադէ, ձեր աչքում հայերը ինչո՞վ են նաւթը իրանց սեպհականացնելու իրաւունքը ստացել։ Իմ կարծիքով եթէ բանը իրաւունքին եկաւ, դեռ թուրքերը առաւել իրաւունք ունեն Բագուի նաւթը իրենց սեպհականութիւն համարել՝ քան թէ հայերը՝ կամ մի որևէ ուրիշ ազգ։ Բայց մենք այդպիսի ծայրահեղութիւն չը քարոզելով միենոյն ժամանակ չենք ցանկանում՝ որ հայերը նաւթի մենավաճառութիւնը իրենց ձեռքը ձգեն։ Մեր միակ ցանկութիւնն այն է՝ որ Կովկասը օտարների հարստահարութեան առարկայ չը դառնայ, որ այդ բերրի երկրի հարստութիւնները ուրիշի ձեռքը չ'անցնին, այլ մնան երկրի մէջ, որ Կովկասը անտէր կաթնատու կովի չը նմանի, որի կաթը ամեն մօտովն անցնողը կթում է, մի խօսքով մենք ցանկանում ենք՝ որ Կովկասը կատարեալ տնտեսական անկախութիւն վայելէ։ Ի՞նչպէս կարելի է հասնել այդ նըպատակին, ինչ պէտք է անել որ մեր հարստութիւնը մեր երկրում մնայ։ Միակ և անհրաժեշտ միջոցն է՝ որ մեր բոլոր տեղական ոյժերը, հայերը և թուրքերը, առանց խտրութեան միանան և մի ամենի ընկերութիւն կազմեն, որի դէմ Նօբէլների և Բագօզինների ջանքերը ոչինչ չին կարող անել։ Փառք Աստուծոյ՝ որ չատ անգամ կեանքը զանազան տեսութեանց վրայ չէ նայում, այլ ինքը իւր ուղիղ ճանապարհովն է գնում։ Այդ կեանքը մեզ մի քանի մխիթարական երևոյթ է ներկայացնում։ Մի քանի մասնաւոր դիպուածներում մենք մեր առաջարկութիւնը արդէն իրագործուած ենք տեսնում։ Մեզ յայտնի է օր. որ հայ եղբարք Սարգսեանցները պարսիկ Թաղիևանցի հետ ընկերութիւն են կազմել. կան և մի քանի ուրիչ մասնաւոր տեղական ընկերութիւններ էլ։ Այդ փոքրիկ ընկերութիւնները երաշխաւոր են մեզ՝ որ մօտիկ է այն ժամանակը, երբ պիտի հաստատուի տեղական գործարանատէրերի մի մեծ և ընդհանուր ընկերութիւն։ Մանաւանդ այս խնդրի վրայ դարձնում ենք Բագուի հայ և թուրք փոքրիկ գործարանատէրերի ուշադրութիւնը՝ որոնք եթէ չը միանան, չեն կարող դիմանալ մեծ գործարանատէրերի մրցմանը։ A propos մի լուր հաղորդենք. Ս. Պետերբուրգում մի մեծ ընկերութիւն է հաստատվում, որ պիտի նաւթի մչակութիւնը իւր ձեռքը ձգէ, թող տեղական ոյժերը չտապեն միանալու, թէ չէ նըրանք առանձին-առանձին ինչպէս կարող են մրցել Ս. Պետերբուրգի առիւծ դրամատէրերի միացած ոյժի դէմ։

Յ. Տէր-Մովսէսեանց.

---

*) Нѣкоторыя соображенія по желѣзнодорожному вопросу на Кавказѣ. Тифлисъ 1879 г.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐԻ և ՁԵՒԻ ուսուցիչ Գըրիգոր և Շուշանիկ Անեանցները Ախալցխայից վերադառնալով Տփխիս՝ կամենում են կանանց և երեխայոց հագուստների կարել և ձևել սովորացնելու համար արհեստանոց բաց անել, եթէ աշակերտուհիների թիւը 15-ի հասնի:

Աշակերտուհիք կարող են լինել և տիկիններ: Արհեստը կ'աւանդուի մայրենի լեզուով: Սովորելու պայմաններին տեղեկանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել գ. Անեանցին կուկիա, Միքայէլեան փողոց, տուն № 27 որտեղ ընդունում են կանանց հագուստների պատուէրներ:

Անեանցները աւելացնում են և այս, որ իւրեանց արհեստանոցում սովորած աշակերտուհիները ամենաազատ կերպով կարող են բէմշուլէննի ուպրավլյում հարցաքննութիւն բռնել:

Յօգուտ Տփխիսի րէալական ուսումնարանի աշակերտաց ապագայ **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ**, ժողովվում են հայերէն ընթերցանելի գրեանք. Ցանկացողք թո՛ղ բարեհաճին ուղարկել իրանց նուէրները «Մեղուի» խմբագրութեան կամ պ. Զ. Գրիգորեանցի «Կովկասեան» գրավաճառանոցի հասցէով:

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է կամսար Տէր-Դաւթեանցի «РУССКОЕ СЛОВО»—Նոր դասագիրք ռուսերէն լեզուի, հայ դպրոցների համար, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ: Ընդունված է Վրաստանի և Իմէրէթի և Երևանայ թեմերի հայոց բոլոր ուսումնարաններում, նոյնպէս Կովկասի և միւս թեմերի ուսումնարաններից շատերում: Վաճառվում է Թիֆլիսում բացառապէս «Կենդրոնական» գրավաճառանոցում: Գինն է 45 կոպէկ: Գումարով գնողներին քանակութեան համեմատ զիջումն կը լինի: Ցանկացողները պէտք է ուղղակի դիմեն «Կենդրոնական» գրավաճառանոցին. Тифлисъ. «Центральная книжная торговля»:

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ» անցեալ տարուայ անդամները և ցանկացողները անդամ դառնալու կարող են դիմել ընկերութեան գանձապահ պ. Մովսէս Թաւադեանին, Թիֆլիսի առևտրական բանկա անդամակցական վճարը հատուցանելու և տոմսակ ստանալու:

Կիւրակէ, դեկտեմբերի 6-ին
ՆԵՐՍԻՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ
եօթներորդ դասատան աշակերտները
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ
Օր. օր. Վ. Գարաքաշեանի, Հայկանուշի, Վարդանուշի, պպ. Ջմշկեանի, Ադամեանի, Ա. Մանդինեանի, Տէր-Գրիգորեանի և Արտ. Յակոբեանի:
ՆԵՐՍԷՍԵԱՆ ՀԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
ՅՕԳՈՒՏ
ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
Կը ներկայացնեն
I
ՉԱՒԵՇՏ
Երգեցողութեամբ և ընթերցանութեամբ.
II
ԼԸ-ԲԱՐԲՈՒԼԻԷ
Կատակերգութիւն 1 արարուածով, հեղ. Մօլիէրի.
III
ՉԱՒԵՇՏ
Երգեցողութեամբ և ընթերցանութեամբ:

Ներսիսեան ուսումնարանի քառաձայն երաժշտական խումբը միջոցներին կ'երգէն երգեր:

Տոմսակները վաղօրօք կարելի է առնել Ներսիսեան ուսումնարանում, կենդրոնական և կովկասեան գրախանութներում, իսկ ներկայացման օրը կասսայում:

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի **«ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՒԱԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ»** առաջին հատորը (Ա. գրքոյկ), որ բովանդակում է իւր մէջ միայն հէքեաթներ, ժողոված Երևանեան նահանգում և գրած բուն տեղական բարբառով:

Այս Ա. գրքոյկի անմիջապէս լոյս տեսնելու յետոյ, մամուլի տակ կը մտնի նորա Բ. գրքոյկը:

Իսկ երբ կը վերջացնենք մեր ունեցած հէքեաթների տպագրութիւնը, այնուհետև ձեռնամուխ կը լինենք ժողովրդական աւանդութեանց միւս տեսակների հրատարակութեան—**ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ, ԱՌԱԾՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ, ԱՆԷԾՔՆԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ** ևայլն (որոնցից մեծ քանակութեամբ ունենք ժողոված) լոյս ածելով նոյնպէս առանձին գրքոյկներով:

Յուսով եմ, որ մեր պատուելի օտարաքաղաքացի համազգայինք չեն զլանայ իւրեանց կարեաց չափ աջակից լինելու ինձ այս ձեռնարկութեան մէջ:

Բաւականաչափ նիւթ ուղարկողները, որպէս այս հրատարակութեան աշխատակիցներ՝ այսուհետև տպագրուելի բոլոր գրքոյկներից մեկ օրինակ ձրի կը ստանան, բացի այս՝ նոցա ազգանունները կը տպագրուին գրքոյկի վերջը: Իսկ այն պարոնները, որոնք այս աւանդութիւններից նոյնպէս մեծ քանակութեամբ ժողոված ունին և կը ցանկան իւրեանց ժողովածուն վաճառել, թո՛ղ բարեհաճեն յայտնել իւրեանց պայմանները:

Նիւթերը հարկաւոր է գրել (գրածը խնդրում ենք մաքուր լինի և որոշ) բուն տեղական բարբառով, դնելով ժողովածուի վերջը տեղական դժուարիմաց բառերի բացատրութիւնները:

Իմ հասցէն՝ Вагаршапатъ. *Тиграну Навасартянцъ.*

Տ. Նաւասարդեանց.

Դուրս եկաւ մամուլի տակից Սեդրակ Մանդինեանի հետևեալ աշխատութիւնը. **ԿԵԱՆՔԻ ՀԱՆԴԻՍԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ»**: Ծխական դպրոցների չորրորդ տարուայ դասընթացք և միանգամայն Ա. Բ. և Գ. տարիների համար հրահանգ: Վաճառվում է բացառապէս «Կենդրոնական» գրախանութում. գինն է 75 կոպէկ:

2—6

ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻՍ վարչութիւնը պատիւ ունի յայտնելու հայ հեղինակներին և գրավաճառներին՝ որ նոքա բարեհաճէին իւրաքանչիւր նոր տպված հեղինակութիւններից մի մի օրինակ ուղարկել ընթերցարանիս անուամբ, որի վճարը՝ եթէ նուիրված չէ, ընթերցարանիս վարչութիւնը պարտ կը համարի անյապաղ հասցնել ըստ պատկանելոյն:

Տնօրէն ընթերցարանի՝
Բժ. Արամեանց.

ՉԵՆՀԱՍՑՐԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
1-ին դեկտեմբերի

Կարապետ Մելքումովին, Մկրտիչ Իսպիրովին, պոտրեադչիկ Պետրովին, Եղիա Արշագուշվիլուն, Վէյքէլին Լոնդոնից.

Լոյս տեսաւ երեխայական **ԼՕՏՕ**, Տփխիսու րէալական ուսումնարանի հայ-աշակերտների հրատարակութեամբ: Վաճառվում է (յօգուտ նոյն դպրոցի աշակերտաց ապագայ **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ**) կովկասեան, կենդրոնական գրավաճառանոցներում և կուկիայի կամրջի վերայ պ. Մատինեանցի խանութում: Գինն է 50 կոպ.:

Զ. Գրիգորեանցի գրախանութումն ստացուել է Րօստովի—Տէր-Աբրահամեանի — **ՕՐԱՑՈՅՑԸ**. 1882 թ: գինն է 15 կ.

Դուրս եկան մեր տպարանից և վաճառվում են նոյեմ. 25-ից սկսեալ.

Ա. ԱՄԵՆՕՐԵԱՅ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ
ՕՐԱՑՈՅՑ
1882 Փ. Թ.

Մեծ թուանշաններով, Հայկական կիւրակիներն տպուած են կապոյտ գոյնով, իսկ կայսերական տօն օրերն տպուած են կարմիր գոյնով: Դրուած են Հայկական, Յուլիանեան և Գրիգորեան բոլոր օրերը, ամիսները և թուականները: Լուսինը ևս դրուած է:

Առ այժմ համառ. դրուած են, օր. պատմական անցքերը Հայոց, մահ նշանաւոր անձանց Հայոց:

Օրացոյցի տախտակն զարդարուած է գեղաքանդակ գեղեցիկ պատկերներով, կրօնական և ազգային յիշատակարաններով, դաստառակի, և ս. Էջմիածնայ պատկերներով: Եւ այս բոլորը մի զարդ է ամեն մի հայի գրասենեակի համար:

Գինն է մէկ ռուբլի

Բ. մեծադիր ՕՐԱՑՈՅՑ 1882 թ. Ք.

Բոլոր օրհ. հրց. մկ. հմբ. և այլն դրուած են կարգաւ: Հանդերձ **«ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ»** Է. տ. յաւելուածով:

Սկզբումն գեղաքանդակ պատկերով
Ա. Առաքինազօր Հայրապետին մերոյ. **ՍՐԲՈՅՆ ՎՐԴԱՆԻՍԻ**:
Բ. և կարուց պաշտման. **ԼԱԶԱՐԵԱՆՑԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ**՝
Գինն է մինչև 600 վերստ 35 կպ. իսկ նորանից բարձր 40 կպ.

Գ. փոքրադիր ՕՐԱՑՈՅՑ 1882 թ. Ք.

Բոլոր օրհ. հրց. մկ. հմբ. և այլն դրուած են կարգաւ: Հանդերձ 2 գեղաքան. պատկերներով երջանկայիշատակն **ՆԵՐՍԷՍ** Ե. կաթուղիկոսի և Ջէմս Բրայս հայասէրն անգղիացւոյ: Գինն է 15 կպ.: Բոլոր 3 տեսակ օրացոյցներից գումարով գնողներին զիջում կը լինի:

Ցանկացողները կարող են դիմել մեզ այս հասցէով. Въ Г. Эривань Խմբագիր և Հրատարակիչ Արգար Գուլամիրեանց.

А. С. Гуламирянцъ 4—5

ОТКРЫТА ПОДПИСКА
НА ГАЗЕТУ
„ДОНСКАЯ ПЧЕЛА“
НА 1882 ГОДЪ.

Съ 1-го Января 1882 года „Донская Пчела“ будетъ издаваться по тойже программѣ, какъ издавалась въ предъидущіе шест лѣтъ, два разьа въ недѣлю.

Редакція, по мѣрѣ силъ и возможности выполняя обязанности провинціальной прессы, находитъ, что „Донская Пчела“ уже достаточно знакома публикѣ, почему и считаетъ всякія рекламы положительно излишними.

ПОДПИСНАЯ ЦѢНА ОСТАЕТСЯ ПРЕЖНЯЯ.

Съ доставкою въ Ростовъ н. Д.		*Съ пересылкою иногороднимъ*	
На годъ	6 руб.	На годъ	7 руб.
„ ½ года	3 „ 50 к.	„ ½ годъ	4 „
„ 3 мѣсяца	2 „	„ 3 мѣсяцъ . . .	2 „ 50 к.

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Подписка принимается къ конторѣ редакціи „Донской Пчелы“ въ Ростовѣ на-Дону, на Большой Садовой улицѣ, въ домѣ И. А. Теръ-Абраміянъ. Иногородніе благоволятъ адресоваться: въ редакцію „Донской Пчелы“ въ Ростовъ на Дону.

Редакція покорнѣйше проситъ г. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 25-го Декабря сего 1881 года подписныя деньги за 1882 г., будетъ разосланъ БЕЗПЛАТНО, въ видѣ преміи, ‚ДОНСКО-АЗОВСКІЙ‘ русско-армянскій календарь на 1882-й годъ.

Редакторъ-Издатель *И. А. Терз-Абраміянъ.*

Մամուլի տակից դուրս եկաւ **ԹՋՈՒԿ** գործ Ալ. Դօդէի թարգ. Հ. Տէր-Միքայէլեանցի: Ծախվում է կենդրոնական և կովկասեան գրախանութներում **ՅՕԳՈՒՏ ԹԻՖԼԻԶԻ** րէալական ուսումնարանի հայ աշակերտների ապագայ **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ**: Օտարաքաղաքացիք կարող են ուղղակի դիմել այս հասցէով. Въ Тифлисъ. Реальное училище г. Теръ-Микелову.

Նորերումս լոյս տեսաւ և վաճառվում է կենդրոնական գրավաճառանոցում **ԳՐԱԲԱՌԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ** մի աղիւսակի մէջ գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար: Գինն է 15 կոպէկ:

ՄԻ ՀԱՄԵՍՏ ԸՆՏԱՆԻՔ ընդունում է երկու երեխաների կերակրելու և ամենայն կերպ հոգալու նրանց վերայ: Հարցնել Էնֆիաճեանցի տպարանում Նազարեանցին:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 3-го Декабря 1881 г.

Տպարանի Մ. Ռոտինեանց և ընկ.